1519. **Թվ. ՋԿԸ.** *Եղաւ Սագալին կռիւն, զոր անհաւատ ազգն կոտորեց Դադարն զիլախն, վասն չմիաբանութեան քրիստոնէիցն։*

1519. **Թվ. ՋԿԹ.** *Ծնաւ Զիկմոնդ Թագաւորն՝ որ կոչի Ակուստ. վասն այն կոչի Ակուստ՝ զի օգոստոս ամսոյն ընծայեցաւ. և Թագաւոր օծեցին ի կենդանութեան հօրն, որ էր Թվն.* **ՋՀԹ** (1530) *յորժամ օծաւ, փետրուար* 20։

1520. **Թվ. ՋԿԹ.** *Սուլէման խոնդիքարն նստաւ ի կայսրութիւն։*

1524 **Թվ. ՋՀԳ.** *Եկաւ Դադարն յիլովին վերայ, և էանց ի Ս. Գէորգայ ռաշեւէն, որ է Բագի (Բուսայ) եկեղեցի, և գնացին մինչև ի Եարոսլովն, և դարձաւ. զոր զՄիքլաշն սպանեցին զիլովցին՝ Սգեցքոյին զորդին։*

1526. **Թվ. ՋՀԵ.** *Սեպտեմբեր ամսոյ. ան ազգն Տաճկաց խոնդքարն Սուլէյման՝ կոտորեց զՄաճար ազգն, և զԹագաւորն Լուտվիկ փախստական արար. և ոչ գիտացին թէ զի եղեւ Թագաւորն, և զՊուտին քաղաքն՝ որ էր դախթն Մաճարաց՝ էառ։*

1527. **Թվ. ՋՀԶ.** *Գնաց Կոստանդին կոտորեց զԴադարն, Քէրօրմանէն այսկոյս հինգ միլ, և էին* 25,000։

1530. **Թվ. ՋՀԹ.** *Գնաց Կոստանդին վաղճանեցաւ. զոր բազում քաջութիւնս ցուցեալ փոխեցաւ առ Քրիստոս։*

1535. **Թվ. ՋՁԴ.** *Բան Դառնովսքիյ էառ զՍդարոյտուպն զՄոսքովի բերդըն, օգոստոսի* 29.

1536. **Թվ. ՋՁԵ.** *Ի Կամենից քաղաքն մեծ քամի ելաւ, և* 133 *տուն կործանեց. և ի նոյն ամին երկիր շարժեցաւ։*

1538 **Թվ. ՋՁԷ.** *Սեպտ.* 17. *Եկաւ խոնդիքարն սուլտան Սուլէյման՝ ի Օլախաց երկիրն, և զՊետր պարոնն ի յերկրէն եհան, և ընկաւ փախըստական։*

1538. **Թվ. ՋՁԷ.** *Ապրիլի* 7, *օրն Աւետման Ս. Աստուածածնին՝ արեգակն խաւարեցաւ։*

1545. Ի *Թվ. Հայոց,* **ՋՂԴ.** *Մարտի* 11 *օրն, Ս. Թորոսի շաբ(աթուն), մեծ ջուր եկաւ և զՀայու ջրաղաչքն աւերեց, և զերկու խապախն (ջրմուղ?) քաղքին, և այլ շատ պակասութիւն առաւ քաղքին (Կամենիցու).*

1545. **Թվ. ՋՂԴ.** *Ապրիլի* 20. *Պարոն Հրիհորն փառաւոր և գեղեցիկ զանկակ երետ ի Ս. Նիկոլայ եկեղեցւոյ, յիշատակ իւրին և իւր հաւասար ննջեցելոց հոգուն համար. ամէն։*

1547. Ի *Թվին Հայոց* **ՋՂԶ.** *Օգոստոսի* 14, *օրն Ս. Աստուածածնին, եկն Ֆրանգի եպիսկոպոսն ի Ս. Աստուածածնին եկեղեցոյ, և քարոզեց երկու անկամ։*